ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 54. Քաղաքապետի լիազորությունները ֆինանսների բնագավառում

1. Քաղաքապետը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

4) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է ~~գույքահարկի ու հողի հարկի~~տեղական հարկերի գանձումը, ինչպես նաև կազմակերպում է տեղական հարկերի և տուրքերի և իրենց մատուցած ծառայությունների դիմաց վճարների, Երևանի սեփականություն համարվող գույքի վարձակալությունից և օտարումից մուտքերի գանձումն ու վերահսկումը.

5) ~~Երևանի բյուջեի հարկերը և օրենքով սահմանված այլ մուտքերը չվճարող անձանց (բացառությամբ եկամտային հարկ և շահութահարկ չվճարողների) նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ~~Երևանի բյուջեի տեղական հարկերը և օրենքով սահմանված այլ մուտքերը չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ.

Հոդված 73. Երևանի բյուջեի ձևավորման աղբյուրները

1. Երևանի բյուջեն ձևավորվում է Երևանի բյուջեին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերի աղբյուրներից, ներառյալ՝

~~1) հողի հարկ՝ Երևանի վարչական տարածքում գտնվող հողի համար.~~

~~2) գույքահարկ՝ Երևանի վարչական տարածքում գտնվող գույքի համար.~~

~~3) Երևանի տարածքում գանձվող եկամտային հարկից մասհանումներ.~~

~~4) Երևանի տարածքում գանձվող շահութահարկից մասհանումներ.~~

~~5) բնապահպանական վճարներից մասհանումներ.~~

~~6) հողի հարկի և գույքահարկի գծով Երևանի բյուջե կատարվող վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ:~~

~~Եկամտային հարկի, շահութահարկի և բնապահպանական վճարների գումարներից Երևանի բյուջե կատարվող մասհանումների չափերը սահմանվում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով.~~

1) անշարժ գույքի հարկ.

2) փոխադրամիջոցների գույքահարկ.

3) եկամտային հարկից մասհանումներ.

4) շահութահարկից մասհանումներ.

5) բնապահպանական հարկից մասհանումներ.

6) անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի խախտումների համար հարկ վճարողներից տեղական հարկերի գծով գանձվող տույժերը և տուգանքները:

Եկամտային հարկի, շահութահարկի և բնապահպանական հարկի գումարներից Երևանի բյուջե կատարվող մասհանումների չափերը սահմանվում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով.

9) տեղական ~~հարկեր,~~ տուրքեր և վճարներ.

Հոդված 80. Երևանի բյուջեի մուտքերի ապահովումը

1. ~~Հողի հարկի, գույքահարկի, տեղական հարկերի~~Տեղական հարկերի, տուրքերի և վճարների, պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարների, Երևանի սեփականություն համարվող գույքի վարձավճարների, Երևանի մասնակցությամբ կազմակերպությունների՝ իրենց հասանելիք շահույթի մասնաբաժնի, ինչպես նաև Երևանի սեփականության օտարումից ստացվող գումարների և պարտադիր այլ վճարների մուտքագրումը Երևանի բյուջե ինքնուրույն ապահովում են Երևանի համապատասխան ստորաբաժանումները: Այլ մուտքերը Երևանի բյուջե ապահովվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: